



ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՒՈՍԵՔՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԳՐԵՍ

2022թ. փետրվարի 2-6

Սոչի, Ռուսաստան

ARMENIAN ONCOLOGY CONGRESS

February 2-6, 2022

Sochi, Russia

Հարգելի գործընկերներ

Փետրվարի 4-ն աշխարհում նշվում է որպես Քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օր: Այս առիթով ՀՀ ԱՆ Ֆանարջյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոնը կազմակերպում է իր ամենամյա գիտագործնական միջոցառումը` Հայկական ուռուցքաբանական կոնգրեսը, որի 2022թ. խորագիրն է «Հայկական ուռուցքաբանություն. նպատակներ և իրականացման ուղիներ»` նվիրված Հայաստանում քաղցկեղի դեմ պայքարին, մասնավորապես` դրա քաղաքականության ու ռազմավարության խնդիրներին, իրականացվող մասնավոր և համալիր միջոցառումներին ու հետագա ծրագրերին, քաղցկեղի կանխարգելման միջոցներին, բուժման նոր մեթոդներին ու մոտեցումներին ներկայացմանը և այլն:

Հայկական ուռուցքաբանական կոնգրեսի նախաձեռնողն ու իրականացնողն է ՀՀ Առողջապահության նախարարության Ուռուցքաբանության ազգային կենտրոնը (ՈւԱԿ)` մի շարք տեղական ու միջազգային կազմակերպությունների հովանավորությամբ:

Կոնգրեսը տեղի կունենա 2022թ. փետրվարի 2-6-ը Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում` [Mercure Sochi Centre](#) 4-աստղանի հյուրանոցային համալիրում, իսկ պաշտոնական ավիափոխադրողն է Nordwind Airlines ավիաընկերությունը:

Նախատեսվում է մոտ 50 զեկույց և ընդհանուր մոտ 200 պատվիրակի մասնակցություն` ՀՀ Առողջապահության նախարարության, Առողջապահության ազգային ինստիտուտի և Երևանի պետական բժշկական համալսարանի ներկայացուցիչներ, հանրապետության ԲԿ-ների ղեկավարներ, տարբեր մասնագիտացման բժիշկ-ուռուցքաբաններ, հանրային առողջապահության մասնագետներ, ազգային առողջապահական ծրագրեր իրականացնողներ, գիտահետազոտական աշխատանքով զբաղվող մասնագետներ և այլն: Զեկուցողների ցանկում են ուռուցքաբանության ոլորտում ճանաչված մասնագետներ Հայաստանից, Ռուսաստանից և Եվրոպայից: Կոնգրեսի աշխատանքային լեզուներ` հայերեն, ռուսերեն, անգլերեն: Կոնգրեսը ներկայացված է ՇՄԶ հավաստագրման:

Կոնգրեսին կարելի է մասնակցել երկու տարբեր կարգավիճակով` զեկուցող և պատվիրակ: Կոնգրեսի «զեկուցող» կարգավիճակի դեպքում մասնակցության ճամփորդության և կացության բոլոր ծախսերը հոգում է Կոնգրեսի կազմկոմիտեն` Կոնգրեսի գիտական խորհրդի կողմից առաջարկված թեման ու դրա համառոտագիրը մրցույթային կարգով հաստատվելու դեպքում: Կոնգրեսի գիտական թեմաների մրցույթով հետաքրքրված լինելու դեպքում կարող եք դիտարկել Կոնգրեսի ընթացքում 1 գիտական ելույթով հանդես գալու հնարավորությունը` առավելագույնը 15 րոպե տևողությամբ: Ձեր ելույթի առաջարկվող թեման և համառոտագիրը խնդրում ենք ներկայացնել մինչև 2021թ. դեկտեմբերի 26-ը` մանրամասներն առցանց տրամադրելով <https://forms.gle/iMmtpdyT6FWxG5nC7> հղմամբ: Մրցույթի արդյունքների մասին կհայտարարվի 2021թ. դեկտեմբերի 30-ին:

Կոնգրեսի «պատվիրակ» կարգավիճակը ներառում է Երևան-Սոչի երկկողմանի էկոնոմ դասի ավիատոմս (ուղեբեռով), 4 գիշերվա կացություն և նախաճաշ` 4-աստղանի հյուրանոցի ստանդարտ երկտեղանոց սենյակում համակցության սկզբունքով Կոնգրեսի ողջ տևողության (2022թ. փետրվարի 2-6) համար, ինչպես նաև սուրճի ընդմիջումներ և ճաշ Կոնգրեսի օրերին

(2022թ. փետրվարի 3-4): Տվյալ կարգավիճակը հաստատվում է միմիայն պաշտոնական անհատական հրավերով՝ մասնակցության գրանցման և պատվիրակի փաթեթի ամբողջական վճարումը կատարելուց հետո, ուստի հետաքրքրության դեպքում խնդրում ենք առցանց գրանցվել այս հղմամբ <https://forms.gle/BqV5GaYkFymwaBb7> հետադարձ կապ ապահովելու համար:

Գրանցվելու և վճարում կատարելու ժամկետներն ու արժեքները բերված են ստորև:
Պարզաբանումների համար կարող եք նամակ ուղարկել ՈւԱԿ-ի Զարգացման ծրագրերի և միջազգային կապերի պատասխանատու Հռիփսիմե Մարտիրոսյանին hripsime.martirosyan@oncology.am էլ.հասցեով:

Կարգավիճակ	Գրանցում մինչև 2021թ. դեկտեմբերի 26	Ուշացած գրանցում մինչև 2022թ. հունվարի 20
Պատվիրակ	175 000 ՀՀ դրամ	250 000 ՀՀ դրամ

*** Կատարված վճարումների չեղարկումը հնարավոր է գումարի 80%-ի վերադարձով մինչև 2022թ. հունվարի 20-ը, որից հետո որևէ չեղարկում չի փոխհատուցվի:

*** Ուռուցքաբանության մասնագիտացող օրդինատորներին տրամադրվում է զեղչված գրանցում՝ 125 000 ՀՀ դրամ և 200 000 ՀՀ դրամ համապատասխանաբար: Օրդինատորներին խնդրում ենք անձամբ ներկայանալ Կոնգրեսի Կազմկումիսե:

*** Որևէ ժամկետում գրանցվելու համար տեղերը սահմանափակ են:

**2022 Հայկական Ուռուցքաբանական Կոնգրես
Աշխատանքային գրաֆիկ (նախնական)**

2022թ. փետրվարի 2, չորեքշաբթի	
11:10	Մեկնում Երևան/Զվարթնոցից դեպի Սոչի
11:20	Ժամանում Սոչի/Ադլեր օդանավակայան
13:00	Պատվիրակների ժամանում Սոչիի հյուրանոց Գրանցում և տեղավորում հյուրանոցում
2022թ. փետրվարի 3, հինգշաբթի	
08:00 – 09:00	Կոնգրեսի մասնակցության գրանցում
09:00 - 13:00	Կոնգրեսի I օր, առավոտյան հատված Սուրճի ընդմիջում 11:00-11:15
13:00 – 14:00	Ճաշի ընդմիջում
14:00 – 18:00	Կոնգրեսի I օր, երեկոյան հատված Սուրճի ընդմիջում 16:00-16:15
18:00 – 24:00	Հանգստյան ժամեր, շփում գործընկերների հետ
2022թ. փետրվարի 4, ուրբաթ	
09:00 - 13:00	Կոնգրեսի II օր, առավոտյան հատված Սուրճի ընդմիջում 11:00-11:25
13:00 – 14:00	Ճաշի ընդմիջում
14:00 – 18:00	Կոնգրեսի II օր, երեկոյան հատված Սուրճի ընդմիջում 16:00-16:15
18:00 – 24:00	Հանգստյան ժամեր, շփում գործընկերների հետ
2022թ. փետրվարի 5, շաբաթ	
09:00 – 24:00	Հանգստյան օր, շփում գործընկերների հետ
2022թ. փետրվարի 6, կիրակի	
10:00	Դուրս գրում հյուրանոցից, մեկնում օդանավակայան
14:25	Մեկնում Սոչիից/Ադլեր օդանավակայանից դեպի Երևան
16:50	Ժամանում Երևան/Զվարթնոց օդանավակայան